

զամենեսին բարձրացեալ նստիս, զոր Տէր ի փառս պահեալ պահպանեսցէ :

Ես անարժան վշտալից եղբայրակից, Մելքիսեդեկ կաթողիկոս Հայոց գրեցի զայս խաղաղութեամբն Քրիստոսի Յիսուսի. եւ համբուրեմ զսուրբ ոտս ձեր: Ի թղթոյն եւ յընծայիցն պատարազաց, զոր ի դարձին իւրում ետ ինձ Ձաքարիա վարդապետ ի ձէնջ կուսէ, ծանեայ զլրութիւն սիրոյ եւ զթութեան Ձերոյ: Ձթուղթն սրբութեան ձերոյ ընթերցայ անչափ խնդութեամբ՝ հանդերձ եպիսկոպոսակցովք իմովք. որք ի նոսա մխիթարութիւնս անհամեմատ քաղցրութեան գտին եւ զամենայն բանս բարևոք կարգեալս տեսին: Ձոր օրինակ (ջուր) զերկիր անապատ յաղեցուցանէ կամ լոյս զամպ տխրական ցրուեալ փարատէ կամ որպէս զկոյսն սուրբ մխիթարեաց հրեշտակն եւ սուրբ Հոգին զառաքեալսն, ըստ նմին նմանութեան եւ թուղթն ձեր լցոյց զմեզ անպատում խնդութեամբ:

Տեսանեմք յայտ յանդիման, զի չէ այս գործ մարդկեղէն, այլ ազգունն սրբոյ Հոգւոյն. գոհութիւնս մատուցանեմք բաշխողին ամենայն բարեաց, որ զերկիւղածսն իւր ելից անչափական պարգեւօք: Ձնոյն յաճախագոյնս ընթերցեալ տեսաք զոգիս մեր միաբան եւ համաչունչ: Տէր Աստուած հանցէ ի գլուխ զիղձս սրտից ձերոց. հնազանդել քեզ յամենայնի եւ կատարել զհաճոյսդ ցանկամք եւ մեք: Եւ զի այս մեր կամք ի բարի վախճան անդր հասեալ